

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ

Արտոնագրային իրավունքը, որպես իրավունքի առանձին ճյուղ, ծագել և իր զարգացման ընթացքի սկիզբն է ստացել կապիտալիզմի առաջացման հետ և իր վերջնական ձևավորումն է ստացել շուկայական տնտեսության հաստատման ժամանակ:

Որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, այն իրենից ներկայացնում է իրավական նորմերի մի համակցություն, որոնք կոչված են կարգավորելու գյուտերի ստեղծման և նրանց հետագա օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Սակայն, եթե դիտարկենք գյուտը որպես տեխնիկական երևույթ, ապա պարզ կլինի, որ նրա ակունքները ծագել են շատ ավելի վաղ, քան նշեցինք, քանզի մարդկությունը միշտ էլ ձգտել է բնությունից քաղել ավելի շատ բարիքներ: Իսկ ինչ վերաբերում է գյուտերի ստեղծման և օգտագործման իրավական կարգավորմանը, գյուտի, որպես երևույթի հազվադեպության և տեխնիկայի ծանր մակարդակի պայմաններում, անգամ չի եղել դրա անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, պատմությունը ցույց է տալիս, որ դեռևս ֆեոդալական հասարակարգի վերջին ժամանակաշրջանում վաճառականները և արդյունաբերողները երբեմն կարողանում էին միապետից ստանալ գյուտերի օգտագործման համար բացառիկ իրավունքներ, սակայն դրանք տրամադրվում էին որպես արտոնություն՝ սոսկ միապետի ազատ հայեցողությամբ: Եվ կարելի է համարել, որ այս ֆեոդալական արտոնությունը հանդիսանում է որպես գյուտերի պահպանման առաջին իրավական ձևը, ներկայումս գոյություն ունեցող և բարդ իրավական կառուցվածք ունեցող արտոնագրի նախապատկերը:

Տնտեսության կապիտալիստական ձևին արդեն դժվար թե համապատասխաներ նորույթների պահպանման ֆեոդալական արտոնության ձևը: Խոշոր արդյունաբերողների շահերին հակառակ էր իրենց նորույթների

պահպանման հույսը կապել միապետի ազատ հայեցողության հետ: Ուստի և՛ արտոնությունները, որպես տեխնիկական նորությունների պահպանման միջոց, պետք է իրենց դիրքերը զիջեին պարտադիր կերպով տրամադրվող փաստաթղթին: Եվ այդ փաստաթուղթը հանդիսացավ արտոնագիրը:

Գյուտին տրամադրվող արտոնագիրը՝ գյուտարարին կամ նրա իրավահաջորդին պետական լիազորված մարմնի կողմից տրամադրվող փաստաթուղթ է, որը հավաստում է այն տիրապետողի մոտ՝ տվյալ պետության տարածքում բացառիկ իրավունքը: Տվյալ փաստաթղթի վերնագրից ելնելով՝ գյուտերի ստեղծման և հետագա օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորող քաղաքացիա-իրավական նորմերի ամբողջությունը կոչվեց արտոնագրային իրավունք:

Դեռևս 1623թ. Անգլիայում ընդունվել էր «Մենաշնորհների մասին ստատուսը», որն էլ կարելի է համարել որպես առաջին արտոնագրային օրենք: Սակայն՝ նշված ակտը արտոնագրի տրամադրումը չէր սահմանում որպես պարտադիր պայման, անգամ, եթե ներկայացված հայտը համապատասխանում էր օրենքի պահանջներին: Այս դեպքում ևս արտոնագրի տրամադրումը կատարվում էր միապետի հայեցողությամբ: Այսինքն՝ նշված օրենքում սահմանված արտոնագիրը, ըստ երևույթին, չէր տարբերվում ֆեոդալական արտոնագրությունից, այլ հանդիսանում էր նրա՝ օրենքով ամրագրված տեսակը:

Արտադրության զարգացմանը զուգորդում, է նաև մրցակցային պայքարը և այդ պայքարում չպարտվելու կարևոր նախապայման է հանդիսանում արտադրվող ապրանքի ինքնարժեքի իջեցումը և որակի բարձրացումը, որն էլ հնարավոր է միայն նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

Նոր տեխնիկայի ներգրավումն ավելի կատարյալ մեքենաների, սարքերի և նյութերի կիրառումը ձեռնարկություններին և ֆիրմաներին հնարավորություն է տալիս ստանալ հարաբերականորեն ավելի բարձր գումարվող արժեք, լրացուցիչ եկամուտ ձեռք բերել տվյալ տեխնիկապես ավելի կատարյալ ձեռնարկությունում արտադրված արտադրանքի անհատական գնի և նմանատիպ ապրանքների միջին շուկայական արժեքի՝ տարբերության հաշվին¹:

Տեխնիկական նոր լուծումների ստեղծումը և արտադրության մեջ ներդրումն իր հերթին բավականին ծախսեր է պահանջում, ընդ որում բավականին բարձր է այդ ծախսերը փակելու ռիսկը: Իսկ արտոնագիրը, նրա տիրոջ մոտ ձևակերպելով օգտագործման բացառիկ իրավունքը, հնարավորություն է տալիս ոչ միայն փակել այդ ծախսերը, այլ՝ եկամուտ ստանալ²:

Ստեղծված իրավիճակում արդյունաբերողների առջև ծառացած խնդիրներից էին՝

1) տեխնիկական նորույթների ստեղծումը

2) այլ ձեռնարկություններում դրանց օգտագործման արգելումը:

Ուստի՝ ձեռներեցները ձգտում էին գյուտերի նկատմամբ ունենալ մենաշնորհ, բացառիկ իրավունք, որի ուժով կարգելեր մրցակցող կողմերին օգտագործել իր մենաշնորհը հանդիսացող գյուտը: Փաստորեն, աստիճանաբար հասարակության մեջ ձևավորվում էր մի խավ, ընդ որում պետք է նշել, որ տնտեսապես կայուն հիմք և նյութական ապահովվածություն ունեցող խավ, որոնց ուղղակի շահերից էր այս խնդրի կապակցությամբ ունենալ իրավական երաշխիքներ, այսինքն՝ ստանալ պետական աջակցություն: Եվ, քանի որ բացառիկ իրավունքների պահպանման տեսակներից է արտոնագիրը, ուստի՝ զարգացած կապիտալիստական երկրներն սկսեցին ընդունել համապատասխան օրենքներ:

Ինչ խոսք, բացառիկ իրավունքները չեն կարող լինել հարատև, քանզի գյուտի էական դերը ոչ թե ինչ-որ արդյունաբերողին հարստացնելն է, այլ հասարակական զարգացման խթան լինելը, ուստի՝ օրենքներում ամրագրվում էին արտոնագրերի գործողության ժամկետները, որից հետո գյուտն անցնում էր համընդհանուր օգտագործման:

Առաջին արտոնագրային օրենքն ԱՄՆ-ում ընդունվել է 1790թ. և սահմանում է, որ «իշխանությունը շնորհում է իրավունք՝ արգելելու ուրիշներին նույն գյուտն օգտագործելը կամ վաճառելը 17 տարվա ընթացքում»: Մեկ տարի անց նմանատիպ օրենք է ընդունվում Ֆրանսիայում: Այդ օրենքն ընդունելու կարևոր նախապայման հանդիսացավ Ֆրանսիայի 1789թ. հեղափոխությունը, որը հռչակում էր հեղինակային և գյուտարարական իրավունքները որպես

մարդու և քաղաքացու անբաժան իրավունքներ: Սի խոսքով, կապիտալիզմի զարգացման հետ զուգընթաց ընդունվում էին արտոնագրային օրենքները: Այսպես օրինակ՝ այն 1820թ. ընդունվեց Իսպանիայում, 1870թ.՝ Ռուսաստանում, 1877թ.՝ Գերմանիայում:

Ամիրաժեշտ է նշել, որ դեռևս այդ ժամանակ գյուտարարությունն իր զարգացման սկզբնական փուլում էր և հազվագյուտ բնույթ էր կրում: Վերոնշյալ օրենքներում արտոնագիր տրամադրող պետական լիազորված մարմինները չէին ստուգում արտոնագիր ստանալու ներկայացված հայտերի բովանդակությունը, այսինքն՝ իրականացվում էր արտոնագրման հայտային համակարգը: Ուստի՝ տվյալ պայմաններում հնարավոր էր անգամ որևիցե գյուտարարական արժեք չներկայացնող ցանկացած տեխնիկական լուծման համար ստանալ արտոնագիր: Հետագայում արտադրության և տեխնիկայի զարգացման հետևանքով աճեցին նաև արտոնագիր ստանալու համար հայտերը և արտոնագրման մեծ համակարգն արդեն արգելակում էր տեխնիկայի զարգացումը և անշուշտ սահմանափակում էր ազատ մրցակցությունը: Ստեղծված իրավիճակը դժգոհություն էր առաջացնում արդյունաբերողների և ձեռներեցների շարքերում: Այդ վիճակից դուրս գալու առաջին քայլը հանդիսացավ գյուտերի նորույթ լինելու հանգամանքի բացահայտումը: Սկսած XIX դարի կեսերից, գյուտերի արտոնագրառնականության պայմանների շարքում աստիճանաբար (նախևառաջ՝ ԱՄՆ-ում) սկսվում է դասվել գյուտարարության ստեղծագործական մակարդակը: Եվ արդեն XX դարի սկզբներին բոլոր զարգացած երկրներում գործում էր արտոնագրման ստուգման համակարգը, այսինքն՝ ներկայացված հայտերը մանրամասն ուսումնասիրվում էին, որի ընթացքում բացահայտվում էր հայտարկված գյուտի նորույթ լինելու արդյունաբերության մեջ կիրառելիության և գյուտարարական մակարդակի հանգամանքները:

Հաջորդ լուրջ փոփոխությունն արտոնագրային օրենսդրության մեջ հանդիսացավ այն հանգամանքի արդյունքը, որ տեխնիկական և գիտությունը թևակոխեց իր զարգացման սլացիկ արագությունը և նրանցից ետ չմնալը դժվար էր անհատ գյուտարարների համար, շատ պարզ այն պատճառով, որ նրանք չէին տիրապետում բարձրորակ սարքավորումներին ու տեխնիկային,

երբեմն, անգամ, չունենին համապատասխան կրթություն: Բացի այդ, վերլուծելով գյուտի տնտեսական էությունը, պարզ է դառնում այն հանգամանքը, որ տեխնիկական մոր լուծումները, անշուշտ, կհանդիսանան եկամտի հստակ աղբյուր և խոշոր արդյունաբերողները հսկայական ջանք ու ներդրումներ են կատարում այդ ուղղությամբ, ընդհուպ այն, որ ստեղծում են հատուկ գիտահետազոտական համակարգեր՝ թանկարժեք սարքավորումներով, ուր աշխատում և իրենց ամենօրյա հետազոտությունների արդյունքում մոր տեխնիկական լուծումներ են գտնում տասնյակ գիտնականներ և մասնագետներ: Այսպիսով, արդյունքում արտոնագրային օրենսդրության մեջ առաջանում է «ծառայական գյուտ» հասկացությունը: Այս դրույթները սահմանում են ծառայական գյուտը, դրա կարգավիճակն ու կարգավորում են հեղինակի և գործատուի փոխհարաբերությունները:

Շուկայական ինտեգրացիայի հետևանքով փոխվում է վիճակը նաև արտոնագրային օրենսդրության մեջ:

Իրացման շուկայի համար մղվող պայքարը, խիստ մասնակցությունը, մենաշնորհների առաջացումն արդյունաբերողներին ստիպում են արտաքին շուկա հանել իրենց արտադրանքը, իսկ առևտրային սահմանափակումների և ոչ մի տեսակ չի տալիս շուկայի վերահսկման ավելի կատարյալ ձև, ինչը որ արտոնագիրը³:

Ինչպես արդեն նշել ենք, արտոնագիրը գործում է այն պետության տարածքում, որը տրամադրել է այն: Ուստի՝ ձեռներեցները և արդյունաբերողներն իրենց մենաշնորհն արտաքին շուկա հանելիս դիմում էին տվյալ երկրի լիազորված մարմնին՝ այդ երկրի շուկայում պահպանությունը տարածելու համար: Մինչդեռ, հատկանշական է այն փաստը, որ առաջին արտոնագրային օրենքներն արտասահմանյան դիմողներին, կամ ընդհանրապես չէին տրամադրում իրավական պահպանություն, կամ էլ սահմանում էին որոշակի սահմանափակումներ: Որպես օրինակ, կարելի է բերել ԱՄՆ-ի արտոնագրային օրենքը, որտեղ էլ ամերիկացին արտոնագիր ստանալու համար տուրք էր մուծում 30\$ չափով, իսկ արտասահմանցիները, բացի անգլիացիներից՝ 300\$, անգլիացիները մուծում էին 500\$ տուրք:

Ինտեգրացիոն գործընթացն արմատապես փոխում էր վիճակը, առաջանում էին երկկողմանի և բազմակողմանի միջազգային պայմանագրեր, որոնք սահմանում էին արտոնագրմանը հավասար պայմաններ:

Հատկանշական է այն համգամանքը, որ միջազգային արտոնագրումը ձեռնատու է թե՛ զարգացած արտադրություն ունեցող, և թե՛ իր զարգացման ուղին բռնած երկրներին: Առաջադեմ արտադրություն ունեցող երկրները ձգտում են շահույթներ ստանալ այլ շուկաներում, իսկ հետամնաց երկրները ձգտում էին իրենց ներգրավել զարգացած երկրների նոր տեխնիկան:

Արտոնագրային իրավունքի հաջորդ լուրջ փոփոխությունների պատճառն էր երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած գիտատեխնիկական հեղափոխությունը: Գիտության և տեխնիկայի րազմաթնույթ և՛ րազմաբովանդակ զարգացման արդյունքում առաջանում են արտոնագրային պահպանության անհրաժեշտությունն ունեցող նոր օբյեկտներ: Գիտատեխնիկական հեղափոխության պատճառով նոր զարթոնք է ստանում գյուտարարական գործընթացը, որի հետևանքով արտոնագրող մարմինների ուղղությամբ հայտերի հսկայական հոսք է սկսվում: Առաջացած քաոսային վիճակում, հայտերով ուղղակի հեղեղված լինելով՝ համապատասխան լիազորված մարմինները չէին կարողանում հաղթահարել կուտակված հայտերի փորձաքննության գործընթացը: Վերադարձը դեպի փորձաքննության հայտային համակարգ տեխնիկայի զարգացվածության այդ մակարդակում հիմնովին կվտանգեր արտոնագրա - իրավական պահպանության սկզբունքները և հեղինակությունը: Լուծումների որոնման հարցը մի շարք զարգացած երկրներում ավարտվեց փորձաքննության հետաձգման համակարգին անցնելով: Մի քանի տարիների փորձը ցույց տվեց, որ նման համակարգի կիրառումը զգալիորեն թեթևացնում է արտոնագրման գործընթացը: Էությունը կայանում է նրանում, որ ներկայացված հայտերը չեն անցնում ըստ էության փորձաքննություն, այլ միայն ստուգվում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը օրենքի պահանջներին, որից հետո սահմանվում է համապատասխան ժամկետ, որի ընթացքում հայտատուն, համապատասխան տուրքը մուծելով, կարող է պահանջել արտոնագրաունակության քացահայտման փորձաքննությունը: Պրակտիկան

ցույց տվեց, որ ներկայացված հայտերի ընդհանուր քանակի 50% անցնում էր միայն նախնական փորձաքննություն և սահմանված ժամկետի ավարտից հետո վերադարձվում էր հայտատուին, իսկ լիազորված մարմինները, փաստորեն, ազատվում էին իրական տեխնիկական-տնտեսական արժեք չունեցող հայտերի աննպատակ փորձաքննությունից:

Կարծես թե, հասարակական երևույթներից անմիջապես ծագող և քիչ թե շատ օրինաչափ զարգացման ընթացք ունեցող արտոնագրային իրավունքը ոչ մի տարակուսանք չի կարող առաջացնել գիտական ոլորտում, բայց, այնուամենայնիվ, արտոնագրային համակարգի ծագման և գոյության հիմնավորման հարցը գիտնականների բազմաթիվ և շարունակական քննարկումների և բանավեճերի տեղիք և մի շարք տեսությունների առաջացման նախադրյալ է դարձել: Ուսումնասիրելով արտոնագրա-իրավական տեսություններն առավել խորությամբ, կարելի է պատկերացնել արտոնագրային իրավունքի հիմնական սկզբունքները և, ընդհանրապես, նրա էությունը: Պարզ է նաև այն հանգամանքը, որ հենց այս արտոնագրա-իրավական տեսություններից են սկիզբ առել առաջին արտոնագրային օրենքները, և դրանց հետագա զարգացումն ու կատարելագործումը, ինչ խոսք, իր արտացոլումն է ստացել նոր օրենքներում:

1 Свядосц Ю. И. "Буржуазное патентное право" 1967г.

2 Иванов И. Д. "Патентная система современного капитализма" 1966г.

3 Иванов И. Д. Указ. соч.